Հայ Դատի Յանձնախումբերու ճամբով Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան մէջ, թէ՛ Քոնկրէսէն ներս Հայկական Յեղափոխութեան ճանաչման գծով տարուած տասնամեակներու աշխատանքը ինքնին վկայութիւնն է այն դառն իրողութեան, թէ՛ առաւելագոյն տարողութեամբ ոտնակոխուած են մեր մարդկային իրաւունքները եւ բռնաբարուած են մեր հողերը: Թէ՛ այսօր Հայաստանի եւ արտերկրի մէջ հայութիւնը պահանջատէր է իր իրաւունքներուն:

Եւ ի՞նչպէս կարելի է այսօր, իրրեւ ազատութեան եւ ժողովրդավարական կարգերու շատագով ճանչցուած այս երկրին՝ Ամերիկայի մէջ, թուրքի կողմէ իրաւագրկուած հայութիւնն ու շրջափակման ենթարկուած Հայաստանը դասել մարդկային իրաւանց խախտումներով ճանչցուած երկիրներու կարգին:

Հայաստանի եւ հետեւաբար հայութեան մասին տրուած այս «թիւր» տեղեկութիւնը, որ այժմ կը կատարուի ամերիկեան հակակառավարական խմբակցութեան մը կողմէ, կատարուեցաւ նաեւ քանի մը ամիս առաջ, այս անգամ նոյնինքն կառավարութեան կողմէ, երբ հակահարեկական պայքարի ծիրէն ներս առնուած միջոցառումներուն ընթացքին, Հայաստանը դասուեցաւ ահաբեկչական երկիրներու կարգին եւ թուական ճշդուեցաւ, որպէսզի Միացեալ Նահանգներու մէջ ապրող եւ օրինական կեցութիւն չունեցող Հայաստանի քաղաքացիները ներկայանան ստուգման: Օրին, եւ շնորհիւ Հայ Դատի Յանձնախումբերու աշխատանքին, այդ որոշումը բեկանուեցաւ՝ զայն «թիւրիմացութիւն» համարելով:

Այժմ անհրաժեշտ է, որ իրրեւ ամերիկահայեր՝ դարձեալ մեր ծայր բարձրացնենք այս կէտին առնչութեամբ բացատրութիւն պահանջելով:

Միաժամանակ սակայն, մեզի կը մնայ մտածել, թէ՛ այդ ո՞ր մուկ ձեռքերն են, որոնք կ'աշխատին կառավարական, թէ՛ հակակառավարական շրջանակներու միջոցով Հայաստանի ու հայութեան վարկը նսեմացնել:

Այս հոսանքը, այս պղտոր ջուրը, որ կու գայ արատաւորելու հայութեան ու Հայաստանի վարկը, պէտք է յայտնարբերել, պահանջելով նաեւ, որ այդ ծանուցումը կատարողները անմիջապէս ներողութիւն խնդրեն Քայլիֆորնիոյ մէջ մեծ թիւ ներկայացնող հայութեանէն եւ սրբագրեն կատարուած անընդունելի սխալը:

# ԼՈՒՐԵՐ՝ ՆԱՅԱՇԽԱՐՅԷՆ - ԼՈՒՐԵՐ՝ ՆԱՅԱՇԽԱՐՅԷՆ - ԼՈՒՐԵՐ՝ ՆԱՅԱՇԽԱՐՅԷՆ

## ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ ԿԸ ԳՆԱՀԱՏԵ ՃԻՐԱՍԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՍԱՆՔԸ

Վերջերս Արցախ կը գտնուէին Ֆրանսահայ բարերարներ կարպիս Նիկողոսեան, Արա եւ Արմենուհի Մանոյեաններ, ինչպէս նաեւ՝ Ֆրանսացի Ալէն եւ Թերէզ Լեկոէ մտադիր է նիւթապէս օժանդակել նոյն գիւղի մանկապարտեզին: Ինչ կը խազահ Արկադի Ղուկասեանի կողմէ:

Ա. Ղուկասեան երախտագիտութիւն յայտնեց հիւրերուն՝ Լեռնային Ղարաբաղի մէջ շարք մը մար-

դասիրական ծրագիրներու իրագործման համար: Նիկողոսեան ընտանիքը Մարտունիի Շեխէր գիւղին մէջ կառուցած է զպրոցական նոր շէնք մը, իսկ Մանոյեան ընտանիքը մտադիր է նիւթապէս օժանդակել նոյն գիւղի մանկապարտեզին: Ինչ կը վերաբերի Ալէն Լեկոէի, ապա ան ծրագրում ըլլալով կ'այցելէ Արցախ՝ առողջապահական ծրագիրներով:

Արկադի Ղուկասեան ներկաներուն ծանօթացուց Արցախի մէջ գործադրուող մարդասիրական ընդլայն շարք մը կարեւոր ծրագիրներ:

Բարձր գնահատական տալով հիւրերուն կողմէ Արցախին ցուցաբերուող օգնութեան՝ Ա. Ղուկասեան միաժամանակ ընդգծեց, որ անոնց ազնիւ առաքելութիւնը ակնառու ապացոյցն է Արցախի եւ Սփիւռքի կապերու զարգացման:

## «ԱՐԱՔՍ» ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԱԴԱՄԱՆԴՈՎ ԵԼԵԿՏՐՈՆԻՔ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Ներկայիս լրջօրէն կը քննուի «Արաքս» գործարանին մէջ ազամանդով ելեկտրոնիք սարքեր արտադրելու կարելիութիւնը: Գործարանի սեփականատէր, «Միջազգային Պիլզնը» կեղոնի գլխաւոր տնօրէն խաչատուր Զաքարեան նշեց, որ այս ճիւղը նորոյթ է ամբողջ աշխարհին մէջ եւ կը նախատեսէ ազամանդի փոշիի օգտագործումը իբրեւ կիսահաղորդիչ (սեմիքոնդուկտոր): Բացի ազամանդէ կիսահաղորդիչներէն, գործարանին մէջ կը նախատեսուի հիմնել սպասարկող արտադրութիւններ:

Նշուեցաւ նաեւ, որ ներկայիս կեղոնի պատկանող գործարաններէն արտադրութեան ամէնէն մեծ ծաւալը՝ հզօրութեան մօտ 40 առ հարիւրով, ունի «Այմաստ»ը: «Արագած»-ը եւ «Քարմաշակմեքենայ»-ն կ'աշխատին իրենց հզօրութեան 25-30 առ հարիւրով:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

12 Յունիսին Ախալքա-ւաքի «Քարեփոխումներու եւ Ժողովրդավարութեան ինքնուրուի» կեղոնի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Ախալքալաքի շրջանի ընկերութեան» ղեկավարութեան ղեկավարութեամբ Վրաստանի խորհրդարանական ընտրութիւններուն նախաշեմին՝ նիւթով քննարկում՝ մասնակցութեամբ շրջանի հասարակական-քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

Քննարկման մասնաժամանակ պէտք է աջակցել այն ուժերուն, որոնք վրացական խորհրդարանին մէջ հայերու շահերէն բխող (Հայկական Յեղափոխութեան ճանաչում, Ջաւախքի ինքնավարութեան շնորհում, հայերու իրաւունքներու պաշտպանութիւն, հայկական մշակութային օճախներու նկատմամբ պետական հովանավորութիւն) իրական, երաշխաւորուած խոստումներ կու տան:

Քննարկման մասնաժամանակ պէտք է աջակցել այն ուժերուն, որոնք վրացական խորհրդարանին մէջ հայերու շահերէն բխող (Հայկական Յեղափոխութեան ճանաչում, Ջաւախքի ինքնավարութեան շնորհում, հայերու իրաւունքներու պաշտպանութիւն, հայկական մշակութային օճախներու նկատմամբ պետական հովանավորութիւն) իրական, երաշխաւորուած խոստումներ կու տան:

## ՀՈՒՓՈՒՄԵԱՆՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՋ

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին, այսու կը փոխանցենք, թէ Ս. Հռիփսիմեանց եւ Պայտանեանց կոյսերու տօնակատարութիւնը կը զուգարկայի այսօր՝ Երկուշաբթի, 16 Յունիս 2003ին: Այս առիթ, եպիսկոպոսական սուրբ եւ անմահ պատրագ պիտի մատուցուի Ս. Եկեղեցոյս մէջ, Երեկոյեան ժամը 6:30էն սկսեալ: Պիտի պատարագը եւ յաւոր պատուածի քարոզը՝ գերշ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՀԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին) Սուրբ պատարագի ընթացքին պիտի կատարուի քափօր սուրբերու մատուցման, ապա քորոնիք եւ հաւաքական հաղորդութիւն: Սիրով կը հրահարուի մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն արարողութեան եւ վերահորդուելու Ս. Հռիփսիմեանց կոյսերու հաւատքով:

ՆՈՐ ԱՍՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱՍԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ներկաներուն ծանօթացուց Արցախի մէջ գործադրուող մարդասիրական ընդլայն շարք մը կարեւոր ծրագիրներ: Բարձր գնահատական տալով հիւրերուն կողմէ Արցախին ցուցաբերուող օգնութեան՝ Ա. Ղուկասեան միաժամանակ ընդգծեց, որ անոնց ազնիւ առաքելութիւնը ակնառու ապացոյցն է Արցախի եւ Սփիւռքի կապերու զարգացման:

## ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԱՒԱՆԴՆԵՐՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒՏՀԱՏՈՒՅՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեան 2 Յունիսին հրամանագիր մը ստորագրած է «Արցախպանք» զրամատան մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան քաղաքացիներուն 1993 թուականէն արժեզրկուած աւանդներուն նախնական փոխհատուցման մասին:

Այդ հրամանագիրին համաձայն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան կը յանձնարարուի ապահովել մինչեւ 1938 թուականը ծնած աւանդատուներու աւանդներուն նախնական փոխհատուցման իրականացումը: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան 2003 թուականի պետական պիւտճէին մասին» օրէնքով նախատեսուած գումարներուն սահմաններուն մէջ:

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ՝ ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պատուէրով, Ռուսիոյ հայկական դպրոցներուն համար կը պատրաստուի ուսուցիչներով հայոց պատմութեան դասագիրք մը:

Այս առնչութեամբ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան Սփիւռքի բաժնի տեղեկացուց, որ այս դասագիրքը լրջ պիտի տեսնէ մինչեւ տարեկերթ՝ 5 հազար տպաքանակով:

Գիրքին հրատարակութեան համար նախարարութիւնը յատկացուցած է 7 - 8 միլիոն դրամ: Դասագիրքը պիտի բաժնուի դպրոցներուն միջեւ՝ ըստ ներկայացուած դիմումներու:

Յայտնենք, որ Ռուսիոյ մէջ կը գործէ 23 հայկական դպրոց, որոնցմէ 19 դպրոցը հանրակրթական է, իսկ մնացեալը՝ կիրակնօրեայ: Այս դպրոցները կը յաճախեն շուրջ 6, 100 աշակերտներ, իսկ անոնց մէջ կը դասաւանդէ 300 ուսուցիչ:

## ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ՝ ՄԻՆԵՍՈՒԹԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Միացեալ Նահանգներու Մինոսթա նահանգի Սէնթ Փոյ քաղաքին մէջ տեղի ունեցած է ազգութիւններու փառատօն մը, որուն ընթացքին Մինեսոթայի Հայկական Մշակութային Միութիւնը արժանացած է փառատօնի գերագնացութեան մրցանակին: Ըստ Կլեմէնտի մէջ անգլերէնով հրատարակուող «Քայլիֆորնիա Քուրիեր» հայկական շաբաթաթերթին, 1932էն ի վեր Մինեսոթայի միջազգային հաստատութիւնը, որուն հետ կը համագործակցին շուրջ 90 ազգութիւններու ներկայացուցիչներ, այս փառատօնը կը կազմակերպէ տարեկան հերթականութեամբ:

Մինեսոթայի հայութիւնը այս փառատօնի հիմնադիր մասնակիցներէն է եւ 12 անգամ արժանացած է գնահատանքներու: Անկէ գատ մրցանակներ չահած են դանիական, ֆիննական, ռումանական եւ թայուանական գաղութները: Հայկական փոքրաթիւ գաղութը փառատօնին ներկայացած է հայկական աւանդական տօներէն «Վարդավառ»ով, ուր շեշտը դրուած է նաեւ Քրիստոսի պայծառակերպութեան տօնին վրայ:

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐՈՒ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առնչական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենակը:

**FUEL CARD**

**IGOL**

**Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:**

**Երբ մագուիք պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:**

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Զամուս
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպան»-ի մօտ
- ▶ SPEED - Զանքաշ, Կալիթի Իթիխտ
- ▶ ՋԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Զարեք Ղաուարնէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժայ Էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆի, Ս. Յակոբ Եկեղեցոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Նահր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատը

# Մշակութային Հե

## ԿՈՂՈՊՈՒՏԻ ՓՈՐՉԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...

ԲԱՍՏԱՎԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԱԳԵՏԵՐ

### ԱՐԵՎ ԷԼԻԲԷԿԵԱՆ



Էլիբեկեան տոհմը առնուազան չորս գեղանկարիչներ պարզեւած է հայ ժողովուրդին: Անոնք բոլորն ալ տարբեր անհատականութիւններ են եւ իրենց գեղագիտական ըմբռնումներով ու արտայայտչաձեւերով ո՛չ կը նմանին իրարու, ո՛չ ալ նոյնիսկ զիրար կը յիշեցնեն: Անոնց կրտսերագոյնը՝ Արեգ Էլիբեկեան ծնած է 1970ին, Երեւան: Մասնագիտական կրթութիւնը կը ստանայ Երեւանի Գեղարուեստաթատերական Բարձրագոյն Ներմարկին մէջ, գոր յաջողութեամբ կ'աւարտէ 1992ին: Քանի մը տարի ետք բնակութիւն կը հաստատէ Քանասա, ուր կ'ապրի եւ կը ստեղծագործէ: Հակառակ փոքր տարիքին, ան բաւական հարուստ կենսագրութիւն ունի արդէն:

Յարգ կազմակերպած է շուրջ տասնեակ մը անհատական ցուցահանդէսներ՝ Մոնրէալի, Տայասի, Պէյրութի, Փարիզի, Անվէրսի եւ Պրիւքսիլի մէջ: Մասնակցած է բազմաթիւ խմբային ցուցահանդէսներու՝ Փարիզի, Նիւ Եորքի, Պոսթըրի, Փրովիտանսի, Տիթրոյիթի, Թորոնթոյի, Լիբանանի եւ Հայաստանի մէջ: Անոր ստեղծագործութիւններէն շատը մնայուն ցուցադրութեան կ'արժանանան՝ Քանասայի, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի շարք մը ցուցահանդէսներու մէջ:

Արեգ Էլիբեկեան կը պատկերէ բնականները, քաղաքային տեսարաններ, ծովափներ, ինչպէս նաեւ՝ երբեմն անկենդան բնութիւններ, որոնք բոլորն ալ սեփական վրձնահարուածներու արգասիքն են: Ան առանց տարւելու նորարարական շարժումներով, կը փորձէ գեղեցիկը բացայայտել տպաւորապաշտական եւ կամ յետապաշտապաշտական արտայայտչաձեւերով, որոնք զինք



զասել կու տան փարիզեան դպրոցը վերակենդանացը նողներու շարքին: Ան իր պատկերած բնութիւնը, քաղաքային փողոցներն ու ճարտարապետական կառուցները կը ձեռնարկէ մանրամասնութիւններէ ու կողմնակի աւելորդարանութիւններէ՝ պահելով սակայն այն հակառակ, որ անհրաժեշտ է գեղեցիկին ու գրաւիչը գրաստորելու: Ան յատուկ դիրքորոշում չունի գոյներու եւ կամ երանգներու հանդէպ, այլ «կ'ենթարկէ» զանոնք իր վրձինի «քմայքին», ուրկէ սակայն կը ծնի մէկ կողմէ ներդաշնակութիւնը իրբեւ հակադրամիասնական ամբողջութիւն, եւ միւս կողմէ՝ զգացականութիւնը իրբեւ վրձնահարուածի թրթիռ...:

Արեգ Էլիբեկեանի համար երփնագրելու արհեստագիտութիւնը անհրաժեշտութիւն է արտայայտուելու:

Այս իսկ պատճառով ան մեզի կը ներկայացնէ խնամուած գեղանկարներ, որոնք սակայն ո՛չ խճողուած են եւ ոչ ալ կը ձգտին գարմացնել ակնդիրը: Անոնք պարզապէս կը հիացնեն մեզ իրենց բանաստեղծականութեամբ ու զգացական աշխարհով, ուր յղացքներն ու առնական գրաստորութիւնները կենսական զեր ունին՝ իրբեւ գեղագիտական արտայայտչականութիւն:

Այս բոլորով հանդերձ, սակայն, Արեգ Էլիբեկեանի արուեստին ներքին հոլովոյթը չ'արտայայտուելը պոռթկումներով եւ կամ կտրուկ անցումներով, այլ ան տրամաբանական ընթացքի մը մէջ է, ուրկէ արուեստագէտը կը մեկնի զէպի առաւել հասունացում:

ՍՊՈՒՍԵՆ ՀԵՐԿԵԼԵԱՆ

www.aztagdaily.com

www.hamazkayin.com

Որովհետեւ Ոստանիկ Ադոյեանը Ամերիկա գաղթելէն ետք իր երփնագրած գեղանկարներուն տակ ստորագրած է Արշիլ Կորբի: Որովհետեւ ան որոշ շրջան մը ուզած է թաքցնել իր արմատներն ու ինքնութիւնը, ստարմերու կողմէ ան յաջողաբար համարուած է ռուս, վրացի եւ հրեայ: Այսօր, շնորհիւ Նուրիցա Մաթոսեանի «Պլէք Էյնճըլ» հատորի հրատարակման եւ մանաւանդ շնորհիւ Աթոմ Էկոյեանի բեմադրած «Արարատ» ժապաւենին, վերջնականապէս հաստատուած է Արշիլ Կորբիի հայկականութիւնը: «Արարատ»ը պատճառեղաւ, որ թէ՛ միջազգային, թէ՛ ներազգային առումներով Արշիլ Կորբիի շուրջ հետաքրքրութիւնը աւելի շեշտուի ու գործուի: Ան այդ, հետաքրքրական պիտի ըլլար 23 տարիներ ետք անգամ մը եւս ընթերցել Կարլէն Մուրատեանի ստորեւ տրուած նամակը ուղղուած «Ռիչըրտ Մարթ» հրատարակութեան, որ Արշիլ Կորբին կը համարէր հրեայ գեղանկարիչ:

Ստորեւ ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք երկու գրութիւններ՝ հազարավայրկան շառուստմասիրութիւն մը կ'ընենք չէ: Մուրատեանի համար մնայուն հետազոտութեան եւ ուսումնասիրութեան տիպար եղած է Արշիլ Կորբի, որուն կեանքին ու գործերուն նուիրուած իր երկու ստուար հատորներուն առընթերցած արուեստագէտին անհիշական ծանօթներուն հետ ունեցած է բազմաթիւ գրոյցներ, բնախնդիր խմբագրութեամբ լրջաբան մակին պատճէնը մեր երբեմն տասարեակ շախտակիցներէն Մոյսէս Ս. Հերկեյեանին տրամադրած է նամակագիրը ինք՝ Արշիլ Կորբիի գեորդին, կարլէն Մուրատեան:

Ինչպէս պարզ կ'երեւի Ռապրէլ Հիւնսի յօդուածէն, Արշիլ Կորբիի տաղանդը որ ւուր բաւելի կը ըրացայտուի ու կը ճառագայթէ աւելի, հանգամանք մը, որ ըստ երեւոյթի անհանգստացուցած է որոշ հոսանքներ, որոնք ապշեցուցիչ ժպտութեամբ սկսած են ծագուելու, կենցաղով ու արուեստով գտարիւն Ադոյեանը ներկայացնել հրեայ կամ հայ հրեայ:

Կարլէն Մուրատեանի նամակը արդար ընդվզուած մը կը ըլլա՞յր զոր ցերեկով կատարուող կողպուտի այդ բացայայտ փորձը: Արշիլ Կորբիի մասին անփոխարինելի վկայութիւններ կը հանդիսանան հետեւեալ պայմաններուն մէջ դրսեւորուած տպաւորութիւնները: 1945ին, երբ լայն հասարակութեան դեռեւս քիչ ծանօթ Արշիլ Կորբի «Ժիւլիէն Լեւի»ի մէջ իր գործերը կը ներկայացնէր, ակամայ քաջորի մէջ գտնուող գերիրապաշտ Անտրէ Պրըթոն եւ անոր ընկերացող Մաքս մով մը կը ընդհարեն օր ցերեկով կատարուող կողպուտի այդ բացայայտ փորձը:

Լած պատաստները: Նոյնքան կարեւոր է կարլէն Մուրատեանի հետ ունեցած գրոյցին մէջ համաբաւար գեղանկարիչ Ուիլիլմ Տը Քուէնի կի հաստատումը, ըստ որում՝ գերիրապաշտները կը գարմանային, որ այս տարօրինակ վանեցին կանխած էր զիրենք գերիրապաշտ բնագաւառին մէջ, յայտնելով միաժամանակ, թէ ինչպէս նշանաւոր չէր դարձած ան Ամերիկայի մէջ: «Բագին»ի յաջորդ թիւին մէջ պիտի ներկայացնենք Արշիլ Կորբիի տաղանդին պայթիւնին, կեանքին ու արուեստին մասին պատրաստուած աւելի ընդարձակ գրութիւն մը, Մովսէս Ս. Հերկեյեանի ստորագրութեամբ:



Ռիչըրտ Մարթ Հրատ. 200 Մատիսըն պողոտայ, Նիւ Եորք, Ն. Ե. 10016 18 Յունիս, 1980

Յարգելի պարոններ, Արշիլ Կորբի հայ մըն է, ո՛չ թէ հրեայ մը: Եւ իբրեւ իր գարմիկը՝ հարկ կը զգամ բողոքել այն սխալին մասին, թէ ինք «հայ հրեայ» մըն է, ինչպէս տեղ գտած է ձեր տպագրած հատորին մէջ, որուն պատճառով ընտանիքս պողոտեցաւ հեռաձայններու եւ նամակներու հեղձով մը: Մայրս՝ Վարդուշ, անոր քոյրը կ'ըլլայ:

Կ'ակնարկեմ «Ինչպէս ապրեցանք» վաւերագրական պատմութիւնը Ամերիկայի հրեայ գաղթականներուն. 1880էն 1930՝ հատորին, հեղինակուած թիւն՝ Արշիլի Հոյի եւ Քեննէթ Լիպտի, հրատարակուած ձեր կողմէ (Ռիչըրտ Մարթէ գրոտայ - Նիւ Եորք, Ն. Ե. 10016) 1979ին: Էջ 47ի վրայ, Արշիլ Կորբիի մէջ նկարին վերարտադրութեան ներքեւ, տեղ գտած են հետեւեալ բառերը: «Արուեստագէտն ու իր մայրը, գծուած՝ Արշիլ Կորբիի կողմէ (1904-1948): Կորբիին հայ հրեայ մըն էր, որ Ամերիկա գաղ-

թեց 1920ին»: Այդ մեծ պատաստը՝ «Արուեստագէտն ու իր մայրը» կը պատկերացնէ քեռիիս մանկութիւնը իր մօրը հետ, Հայաստանի մէջ: Փաստօրէն, այսպէս կոչուած, «հայ հրեայ» գոյութիւն չունի:

Արշիլ Կորբի, իսկական անունով Ոստանիկ Ադոյեան, գուտ հայ էր՝ իր ընտանիքին երկու պարագաներով: Ադոյեանները իր հօր կողմէ, եւ Մարտիրոսեանները՝ մօր կողմէ: Իրաւամբ ան կը սերէր հայ առաքելական եկեղեցւոյ քահանայներու հին գիւնդին: Պատճառներէն մէկը, որ Առաջին Աշխարհական պատերազմի ընթացքին կատարուած թրջական ջարդերուն իր մայրը, ընտանիքին մեծամասնութիւնը եւ երեք-բաւորը հայ ժողովուրդին (առաջին ցեղասպանութիւնը 20րդ դարու, որ ճամբայ հարեւր 47ի վրայ, Արշիլ Կորբիի մէջ նկարին վերարտադրութեան ներքեւ, տեղ գտած են հետեւեալ բառերը: «Արուեստագէտն ու իր մայրը, գծուած՝ Արշիլ Կորբիի կողմէ (1904-1948): Կորբիին հայ հրեայ մըն էր, որ Ամերիկա գաղ-

թեց 1920ին»: Այդ մեծ պատաստը՝ «Արուեստագէտն ու իր մայրը» կը պատկերացնէ քեռիիս մանկութիւնը իր մօրը հետ, Հայաստանի մէջ: Փաստօրէն, այսպէս կոչուած, «հայ հրեայ» գոյութիւն չունի: Արշիլ Կորբի, իսկական անունով Ոստանիկ Ադոյեան, գուտ հայ էր՝ իր ընտանիքին երկու պարագաներով: Ադոյեանները իր հօր կողմէ, եւ Մարտիրոսեանները՝ մօր կողմէ: Իրաւամբ ան կը սերէր հայ առաքելական եկեղեցւոյ քահանայներու հին գիւնդին: Պատճառներէն մէկը, որ Առաջին Աշխարհական պատերազմի ընթացքին կատարուած թրջական ջարդերուն իր մայրը, ընտանիքին մեծամասնութիւնը եւ երեք-բաւորը հայ ժողովուրդին (առաջին ցեղասպանութիւնը 20րդ դարու, որ ճամբայ հարեւր 47ի վրայ, Արշիլ Կորբիի մէջ նկարին վերարտադրութեան ներքեւ, տեղ գտած են հետեւեալ բառերը: «Արուեստագէտն ու իր մայրը, գծուած՝ Արշիլ Կորբիի կողմէ (1904-1948): Կորբիին հայ հրեայ մըն էր, որ Ամերիկա գաղ-

### ԿԱՐԾԻՔՆԵՐ

Ան շատ յառաջադէմ էր, որպէսզի իր ժամանակին հասկցուէր: Ես հաստատ կրնամ ըսել, որ անոր շատ մը նկարները աւելի մեծ են, քան՝ Փիքստոյի, Մաթիսի, Էլ Կրեյնի նկարները:

ՈՒՒԼԻԸՄ ՏԸ ՔՈՒՆԻՆԿ

Արշիլ Կորբի Ադոյեան խորհուրդ տուաւ ինձի, որ ամէնէն առաջ վստահիմ իմ ենթադրական կանգնումը: ... Աւելի ուշ, երեսնական թուականներուն, ես ըմբռնեցի, թէ ան կ'ուզէր վարպետներու կառուցումը պայմանաւորել իր անհատական արտայայտչականութիւնը պահպանելու, սիւստանալով, աւելի եւ աւելի յանձնուիլ իր ցեղային յիշողութիւններուն եւ շարչարուած անգիտակցականին:

ԺԵՔՈՊ ՔԵՆԸՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԿԱՐԻՉ

Անոր՝ Արշիլ Կորբիի մօտ այդ բոլորը, այսինքն՝ գերիրապաշտական հակումները, կային նախքան գերիրապաշտներուն ասպարէզ գալը:

ՄԻԼՈՐԵՆ ՌԵՉԵԿԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԿԱՐԻՉ ԵՒ ԳՐՈՂ

«... Կորբիին նկարած է իր տիեզերքը, ան իր արուեստով ստուերի մէջ ձգեց նոյնիսկ մեծ համբաւ ունեցող նկարիչները, անե՛ր՝ Փոլաքը:

ՈՒՒԼԻԸՄ ՏԸ ՔՈՒՆԻՆԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԿԱՐԻՉ

Արշիլ Կորբի նախասարգ մըն է, գուցէ շատ հին հայ մը:

ՈՒՒԼԻԸՆ ՆԱՔԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔԱՆԳԱԿԱԳՈՐԾ

Կորբիին Միացեալ Նահանգներու արուեստի պատմութեան մէջ երբեւէ եղած նկարիչներուն ամէնէն մեծն է ու իրարայատուկը:

ԲԱՆԱՍԵՂՈՒ ԱՆՏՐԵ ՊՐԵՏՈՆ

Նորամայր Նախագիծ

ՆՈՒԱԶՄԱԳՈՅՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՈՂ ԵՐԱԺԻՇՏԸ

ՅԱՌԱՋԱՊԱՏԱԿԱՆ ԵՒ ԵԼԵԿՏՐՈՆԻԿ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԵՐԱՇՏՏՈՒԹԵԱՆ ԻՏԱԼԱՅԻ ՈՒՄԿՐԱԿԱՆ ԼՈՒՉԻԱՆՈ ՊԵՐԻՈ (ԲԵՅԹԻ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ԱՍՈՒՍԻՆԸ) ՄԱՐԱՅԱԿ ՄԱՅԻՍ 27Ն: «ՏԸ ՏԵՅԼԻ ԹԵԼԵԿՐԱՖ» ԿԸ ԳՐԵ ԱՆՈՐ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՌՃԻՆ ՄԱՍԻՆ

Լուչիանո Պերիո մահացավ 77 տարեկանին: Ան ժամանակակից երաժշտության մասնագետներուն կողմէ կը նկատուէր երաժշտական ամէնէն բնական հակումով եւ նուազագոյն օրէնքներով առաջնորդուող երաժիշտ, որ կը պատանի 1948էն ետք ստեղծագործած սերունդին:

Ան ելեկտրոնիք երաժշտութեան ուսուցիչըն էր եւ խօսքը երաժշտութեան միաձուլելուն նոր միջոցներ կ'որոնէր: Ոգիով կը պատկանէր իտալական երաժշտութեան գաղափարն ու քնարական աւանդին: 20րդ դարու իտալացի երաժիշտ Լուչիի Տալլափիչչոլայի օրինակը ներշնչման աղբիւր էր իրեն համար: Շատերուն նման ան շատ բան կը պարտէր Սթրաւինսքիի ազդեցութեան: Նա եւ խմբավար էր եւ ռուտուշի:

Պերիոյ ներգրուածը 20րդ դարու երաժշտութեան մէջ քրափի քթընկիւղէն կերարկումն էր: Օրինակ, ան 8 ձայներու եւ նուազախումբի համար յօրինած իր «Միմֆոնիա»ին մէջ օգտագործած է տարբեր գրադէտներու, ինչպէս՝ ձէյլմս ծոյսի եւ Մամուէլ Պեքէթի գրութիւնները եւ Մասլիքի «Ներկորդ համառուագ»ին թէթեւ նուագին (սքբո) շրջադիրտ մէջ տեղադրած է դասական եւ վիպերգական գործեր մէջընդմիջ: Ան «Յիւսիս» շրջադիրտ մէջ տեղադրած է դասական եւ վիպերգական գործեր մէջընդմիջ: Ան «Յիւսիս» շրջադիրտ մէջ տեղադրած է դասական եւ վիպերգական գործեր մէջընդմիջ: Ան «Յիւսիս» շրջադիրտ մէջ տեղադրած է դասական եւ վիպերգական գործեր մէջընդմիջ: Ան «Յիւսիս» շրջադիրտ մէջ տեղադրած է դասական եւ վիպերգական գործեր մէջընդմիջ:

Պերիո իր գործերէն շատերը յօրինած է իր առաջին կնիք՝ ամերիկացի մեցո սոփրանո երգչուհի Քէյլի Պէրպլէրեանի համար, որուն ձայնային արտասովոր տարողութիւնն ու ձուլունութիւնը փայլուն կերպով օգտագործած է իր «Վոյսը» գործին մէջ, զոր յօրինած է 1960էն 1961ի միջեւ: Պերիո առանց որեւէ գրութեան օգտագործելու՝ Պէրպլէրեանի երգիչ տուած է, յանձնարարելով արտասանել անկախ բառեր, որոնց մէջ կար միայն մէկ յստակ բառ՝ փարոլ: Ան արդիւնքը միաձուլած է ելեկտրոնիք ձայներու: Իտալական ձայնասփռու, որուն համար յօրինած էր «Վոյսը» գործը, արգիլած է անոր ձայնասփռումը:

Լուչիանո Պերիո ծնած է Օնեկիա (Լիկորիա), 10 Հոկտեմբեր 1925ին: Անոր մեծ հայրն ու հայրը երգեհոն կը նուագէին եւ երաժշտութիւն կը յօրինէին Օնեկիոյ մէջ: Ան յաճախած է Միլանի երաժշտականը եւ աշակերտած է Փիցցիթիի:

Պերիո 1944ին զինուորագրուած է իտալական բանակին մէջ: Զինուորական ծառայութեան առաջին օրը իրեն յանձնուած է զէնք մը, զոր փորձելու ընթացքին սխալմամբ կրակած է վիրահարուելով առ ձեռքը: Այնուհետեւ 3 ամիս անցուցած է զինուորական հիւանդանոցի մը մէջ եւ զինուորական ծառայութենէն զերծ մնալու թուղթ մը կեղծելով՝ խոյս տուած է զէպի Բոմո, ուր միացած է հայրուկային խումբերու:

Պատերազմէն ետք, 1945ին, Պերիո սկսած է յաճախել Միլանի երաժշտանոցը: Կերտնացած է երաժշտական յօրինումի վրայ, որովհետեւ վիրահարուելու պատճառով պիտի չկարենար ասպարէզ մը կերտել իրեն դաշնային զոյնը: Անոր հրապարակաւ կատարուած առաջին գործը դաշնային սուիք մըն էր, զոր ան յօրինած էր 1947ին: Պերիո իր ապրուստը կ'ապահովէր ընկերակցելով երգիչներու եւ խմբավարութեան պաշտօններ ընդունելով փոքր օփերայներու մէջ: 1950ին ան ընկերակցած է նաեւ Քէյլի Պէրպլէրեանի, որ կրթնայատու կը փնտռէր Միլանի մէջ ռուսներու համար: Քանի մը ամիս ետք անոնք ամուսնացան:

Պերիո առաջին անգամ Միացեալ Նահանգներ այցելած է իր մեղրալուսնին առիթով, ուր Նիւ

«Լուչիանո Պերիո Բ. Աշխարհամարտէն ետք ստեղծագործած լուրջ երաժիշտներուն մօտ կը յօրինէր այնպիսի երաժիշտութիւն մը, որ էպպէս կ'արտացոլացնէր մարդկային կարեկցանքի յատկանշիչներ: Այս պատճառով ան բազմաթիւ հետադարձ ունեցաւ իր բնագաւառին մէջ եւ 1950ական տարիներէն մինչեւ այսօր կը մնար իտալական երաժշտութեան կեդրոնը...: Ան կը յուսար միաձուլել ժողովրդային եւ գեղարուեստական երաժշտութիւնը, «երաժշտական հնադարեան ու ժողովրդային ստեղծագործութեան միջեւ ստեղծելու համար իրական, ըմբռնելի եւ հասկնալի շարունակութիւն մը, որ մօտ ըլլար առերայ կենսոյն եւ մեր երաժշտութեան, ինչպէս ըսած է ան: Նպատակս ժողովրդային երգի մը հարագատութիւնը պահելը չէ: Իմ յօրինած տարբերակներս մեկնաբանութիւններ են»:

«ՏԻ ԻՆՏԻՓԵՆՏԸՆԹ»

Երգի մէջ լսած է Լուչիանի եւ Ուեսթլեյքի ելեկտրոնիք յօրինումները: 1953ին յօրինած է իր ելեկտրոնիք «Մայմուկը»ը՝ իտալական պատկերասփիւղի եւ ձայնասփիւղի «Աւ-էյ-Այ-» ցանցին կողմէ պատաստուած ժապաւէնի մը համար:

«Աւ-էյ-Այ-» Պերիոն հրահարած է ելեկտրոնիք սքիւտիդի մը ծրագիրը մշակելու: Ան տարբեր երաժիշտներու հետ խորհրդակցելէ ետք, 1955ին Պրուսո Մատերնալի հետ հիմնած է Միլանի ելեկտրոնիք երաժշտութեան սքիւտիդ: Անոնք իրենց առաջին ելեկտրոնիք երաժշտութեան համերգը տուած են 1956ի Մայիսին:

Պերիո հրահարած է օտար երաժիշտներ, ինչպէս՝ Ճոն Քէյճ, որպէսզի աշխատին «Աւ-էյ-Այ-»ի հետ: 1956էն 1959 հրատարակած է ելեկտրոնիք երաժշտութեան պարբերաթերթ մը՝ «Ինքնօրնի Միլեդիքալի»: Այս շրջանին ան յայտնաբերած է ելեկտրոնիք ձայներ մշակողները եւ անոնց իւրապատուկ որակ մը տալու նոր միջոցներ:

Սքիւտի, աւագսքիւտի (քարինէթ), տաւիդի, փոքր ջութակի, թաւոնի կնիքի եւ ձայներիգի համադրութեամբ «Տիֆրոնսը» գործը այնքան յաջող կերպով կը միաձուլէր ելեկտրոնիք երաժշտութիւնն ու աւանդական գործիքները, որ Պերիո գուտ ելեկտրոնիք երաժշտութենէ բաղկացած իր վերջին գործը՝ «Մոմենթի» յօրինեց 1960ին:

Պերիո 1960ին Քէյլի Պէրպլէրեանի համար յօրինած է «Մըբըրլ» գործը: Անիկ կ'ընդգրկէր երեք բանաստեղծութիւններ, զորս երգչուհին պիտի երգէր յաճախ միայն «ի» հնչիւնն արտաբերուեց: Այս գործին մէջ իմաստային բառերը կը միաձուլուէին հնչիւնային ձայներու, տաւիդի եւ հարուածային երկու գործիքներու հետ՝ ստեղծելով ձայնային նոր, զարմանահրաշ բարդ աշխարհ մը: 1962ին, երբ ան կը դասաւանդէր Փարիզի մէջ, հրահարուեցաւ Քալիֆորնիա՝ դասաւանդելու համար Օքլեյնտի Միլրֆոլտին մէջ:

Պերիո 1963ին վերջնականապէս հաստատուեցաւ Միացեալ Նահանգներ, ուր 1965ին ամուսնացաւ հոգեբանութեան ուսանող Սիւզըն Օյամայի հետ, ամուսնալուծուելէ ետք Քէյլի Պէրպլէրեանէն: Սակայն երաժշտական կապը պահուեցաւ երկուքին միջեւ: 1965ին Պերիո «Շոք սոնկը» շարքը յօրինեց Քէյլիի համար եւ «Սե-



Ջոն Կեյթ Թրայն: Պէրպլէրեան մահացաւ 1983ին:

Նիւ Երոքի «Ճիւլիբըտ» երաժշտական դպրոցին մէջ դասաւանդելու շրջանին Պերիո հիմնած է «Ճիւլիբըտ անսամբլը», որ պիտի մասնագիտանար ժամանակակից երաժշտութեան մէջ: 1965ին Տանթի ծննդեան 700ամեակին առիթով ան յօրինած է իր գլխաւոր գործերէն «Լապորին-թուս թիւ 2»ը, որ արժանացած է «Իթալիա» մրցանակին: Այս գործը հիմնուած էր Սանկուս-նէթիի մէկ բանաստեղծութեան, Աստուածաշունչէն հաստածներու եւ այլ գրութիւններու վրայ, իսկ երաժշտութիւնը կը պարունակէ ազնաւորութիւններ՝ Մոնթեվերտիի, Սթրաւինսքիի եւ այլ երաժիշտներու:

Մարթին Լուտեր Քինկի սպանութիւնը 1967ին ներշնչման աղբիւրն էր Պերիոյի «Օ Քինկ» գործին, զոր ան հետագային կցած է իր «Միմֆոնիա»ին: «Օ Մարթին Լուտեր Քինկ»ի բառերը աստիճանաբար կը կազմուէին հնչիւնային տարբերով եւ մարդկութեամբ կ'արտասանուէին միայն վերջաձուլութեամբ:

Ամերիկայի մէջ 1969էն 1970ի միջեւ Պերիոյի յօրինած յատկանշական գործերէն է նաեւ «Օփերա», որ երաժշտախառն թատրոնի փորձառական մեծ մըն է: Սանթա Թէյօի մէջ անոր կատարուած խառնուրդով յօրինած «Օրֆէո» օփերային բառերուն, «Մոնթեվերտիի խորտակումին եւ Նիւ Երոքի մէջ բեմադրուած թատերախաղի մը վրայ:

Պերիո «Ճիւլիբըտ» դպրոցի իր պաշտօնէն հրաժարեց 1971ին: Ան ամուսնալուծուեցաւ նաեւ իր երկրորդ կնիքին: Ամերիկայի մէջ ան ապրած էր բազմազգաղ կեանք մը, եւ անոր բնակավայրը եղած էին պանդուկները: 1972ին ան կալուած մը դնեց Սիեննայի մօտ եւ որթատունկերու պտղութեան ծառեր տնկեց: Երեք տարի ետք ստեղծուեցաւ հոն եւ 1977ին ամուսնացաւ խորայնացի երաժշտագետ թալիա Փեքըրի հետ: Հակառակ իր գեղջկական արմատներուն, Պերիո մշակ չդարձաւ: Ան ընդունեց Պուլշէրի հրահարը՝ վարելու փարիզի մէջ անոր ելեկտրոնիք երաժշտութեան սքիւտիդին ղեկավարութիւնը:

ԴԱՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ՝ ԵՐԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՄԻՆՆԵՐՈՎ

ՇԱՄԱՏԱՑԻ ՎՐԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱԲԱՆԵՐ ԱՌԹՈՂ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԻՐԵՆՑ ՏԵՂԸ ՊԻՏԻ ԶԻՋԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱԲԱՆԵՐ ԱՌԹՈՂ ԳԵՐԱՆԿԱՐՆԵՐՈՒ, ՈՐՈՆՑ ՍԵՋ ԿԱՐԵԼԻ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ «ՊՏՏԻԼ»: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ՄԱՆԱՄԱՆԵ:

Գիտնականներ ստեղծած են իրականութեան խաբանքը առթող աշխարհ մը, որ առիթ կու տայ մարդոց՝ քայլելու առաքելներուն եւ նոյնիսկ Երեսնամեայ կողբին:

«Մաթրոսֆիթ» ընկերութեան կողմէ կատարելագործուած արհեստագիտութիւն մը եզակի հաստատութիւն մը կ'ընձեռէ հին վարպետներու աշխարհին, առիթ տալով, որ մարդիկ իրողապէս հետազօտեն գեղանկարի մը իւրաքանչիւր բաժինը, ինչպէս՝ Փիեթրո Տելլա Ֆրանչեսքայի «Քրիստոսի ձաղկումը» գեղանկարը: «Մաթրոսֆիթ»ի բրիտանական մասնաճիւղին մէջ (Քէյմպրիճ) ուսումնասիրողներ կատարելագործած են արհեստագիտութիւն մը, որ նոր գիտնականներին ցոյց կու տայ արհեստագիտ. կամ անոր տարբեր մասերը, առիթ տալով, որ արուեստի պատմաբաններ վերլուծեն իրերու ձեւն ու համապատկութիւնները:

Այս արհեստագիտութիւնը նաեւ կրնայ գեղանկար մը վերականգնել երեք ուղղութիւններով (երկարութիւն, լայնք, խորք): «Կը զգաս, թէ գեղանկարին մէջ ներկայ են եւ կրնաս նոյնիսկ ինքզինքդ գտնել՝ Քրիստոսի կողբին» կը բացատրէ ծրագիրին հեղինակներէն Անթոնիո Քրիմինիսի: Կ'անկալուի, որ նկարչական բնագաւառին մէջ կատարելագործուած այս նոր արհեստագիտութիւնը աւելի իրարու մօտեցնէ արուեստի եւ երաժշտութեան գիտութեան աշխարհը: Անիկ արդէն սուր բանավեճեր ստեղծած է արուեստի պատմաբաններու միջեւ: Վերածնունդի վարպետներ որքանո՞վ կ'ապաւինին արհեստագիտութեան, ինչպէս՝ հայերին:



Այսուհետեւ կարելի է դեգերիլ Փիեթր Տելլա Ֆրանչեսքայի «Քրիստոսի ձաղկումը» գեղանկարին մէջ:

Ու գործածութեան, իրենց գեղանկարներուն հեռանկարները ստեղծելու համար: Նման վեճեր կարելի պիտի ըլլայ լուծել նորաստեղծ արհեստագիտութեան ընձեռած վերլուծումներուն միջոցով: Նորաստեղծ արհեստագիտութիւնը նաեւ կրնայ չլքել թանկարաններու նկատմամբ մարդոց կարծիքները՝ ընձեռելով իրականութեան խաբանքը առիթ տալով մարդկային արուեստի փակուած պիտի չլլայ ան պատմագիտութիւնը, որ արուեստին գործեր ամփոփուած են: «Համացանցի վրայ թանկարան մը առիթ կու տայ պատմելու իր միջանցքներուն մէջ՝ կ'ըսէ Քրիմինիսի: Սակայն քիչ մը ձանձրացուցիչ կը նկատենք ասիկա: Որքան աւելի լաւ է պտտիլ ինքնին գեղանկարի մը մէջ»:

ՄԵԾ ԱՐՈՒԵՍԱԳԷՏՆԵՐ ԿԱՐՃԱՏԵՍ ԷՒՆ ԳԻՏԱԿԱՆ ՍԸ ՇԱՄԱՅՆ, ՏՊԱՌՈՐՊԱՇՏ ԳԵՐԱՆԿԱՐՈՒԹԵԱՆ ՈՃԸ ԿՐԱՅ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՋ ԸԼԼԱՄ ԳԵՐԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՏԵՍՈՐԱԿԱՆ ԴՊՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ:

Տպաւորապաշտ գեղանկարիչներու մեծագոյն գործերէն ոմանք իրագործուած կրնան ըլլալ անոնց տկար տեսողութեան շնորհիւ, կ'ըսեն գիտնականները:

Մոնէի, Ռենուարի եւ Տեկալի նման գեղանկարիչներ կը տառապէին կարճատեսութենէ, ինչ որ իր ազդեցութիւնը կրնայ գործած ըլլալ անոնց գեղանկարչական ոճին վրայ, կ'ըսէ նոր ուսումնասիրութիւն մը: Աւստրալիացի ղրաբան Նոէլ Տանի համաձայն, կարճատես արուեստագէտներ, որոնք աշխարհը նոյն ձեւով կը տեսնէին, հաւանաբար «դիպուածով մէկտեղուած են»:

«Տէյլի Սէյլ», որ կ'անդրադառնայ Տանի ուսումնասիրութեան, կը մէջբերէ անոր կարծիքը: «Այս արուեստագէտները քիչ մը ազօտ կը տեսնէին ամէն ինչ, եւ ձեւով մը տպաւորապաշտ ոճը յայտէս ծնունդ առած է»:

Տանի յայտնաբերումները տեղեկագործած են «Ճընըլ ասֆ ֆիլիթըլ Նիւրուսայնս» թերթին մէջ: Ան կ'ըսէ, թէ գեղանկարիչներուն տեսողական դժուարութիւնները նաեւ կրնան բացատրել, թէ անոնք ինչո՞ւ հակամէտ էին յաճախ գործածելու յատուկ գոյներ, ինչպէս՝ կարմիրը:

Սեզան, Փիքասօ, Մաթիս եւ Ռոտէն տպաւորապաշտ այն արուեստագէտներն են, որոնք կարճատեսութենէ կը տառապէին:

Տան կ'ըսէ, թէ այս արուեստագէտներուն կարճատեսութիւնը կրնայ բացատրել անոնց գեղանկարիչներուն մեղմ գիծերը, մանրամասնութիւններու բացակայութիւնը եւ վառ գոյներու գործածուած թանկութիւնը:

«Կարճատես անձեր կը տեսնեն իրենց մօտ գտնուող իրերը, ինչպէս՝ պատատու, սակայն հե-



Որնուար կարճատես էր...

ռուն գտնուող կառոյցները ազօտ կը մնան անոնց տեսողատիւն մէջ, - կ'ըսէ Տանի: Կարճատեսութեան մէկ այլ հետեւանքն է կարմիր շեշտուած գործածութիւնը, որովհետեւ կարճատեսներուն աչքը նուազ կրնայ կեդրոնանալ տեսողական լուսատարիներին կապտոյ ծալաւոր սին վրայ, ինչ որ պատճառ կը դառնայ, որ անոնք կարմիրը աւելի յստակ տեսնեն, քան կապտոյնը:

Տանի համաձայն, վաւերական որոշ արձանագրութիւններ ցոյց կու տան, թէ Սեզան եւ Ռենուար մերժած են ակնոց գործածել: Տանի ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց կու տայ, թէ ակնաբողբ (քաթաքաթք) կրնայ ազդեցութիւն գործել արուեստագէտներու գոյնի ընտրութեան վրայ:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՈՅԱՆ-ՍՐԱՊԵԱՆ





